

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍԱՐԱՇԻ ԱՂԵՏԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ
ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

Մարաշի Աղէտի 90րդ Տարելիցին առթիւ, Մարաշի Հայրենակցական Միութեան Գալիֆորնիայի Մասնաճիւղի Հովանաւորութեամբ, Կիրակի, Փետրուար 21ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Հանդիսաւոր Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ Մարաշի Աղէտի 90րդ Տարելիցին առթիւ:

Օրուան Սուրբ Պատարագը մատոյց Արժ. Տ. Զարեհ Քինյ. Մանսուրեան, իսկ «Արտաքսման Կիրակի»ի առթիւ հոգեշունչ քարոզ տուաւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան:

Արարողութեան աւարտին Փասատինայի Մարաշի Հայրենակցական Միութեան Աստուրեան Սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Արժ. Տ. Զարեհ Քինյ. Մանսուրեան: Օրուան բանախօսն էր Դոկտ. Կարօ Մոմճեան: Գեղարուեստական ճոխ յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին արուեստագէտներու հոյլ մը՝ Նունէ Աւետիսեան, Սալբի Մայիլեան, Յովհաննէս Շահպազեան, Ռուբէն Յարութիւնեան եւ Աշոտ Սարգիսեան: